


ՍՄՐԱՏ ԲԻՒՐԱՏ
Նմբագրութիւն «Փիիկնիկ» Ի
Ալեքսանդրիա



S. Euzat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
Լրօ
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Փ Ի Ի Կ Ն Ի Կ

ԱՐՏԱՍՍՆՎՄԱՆ
Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

Բ Ա Չ Ն Ե Գ Ի Ն
Կ Ա Ն Խ Կ Է
Եռագիր ԵՏ չ'գար-
նուիր

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ Բպլ. 6
Ազգեր կ'ընդուն-
ուին մասնաւոր
պայմաններով

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ԷԻՆՉԵԱԲԹԹ, ԿԵՐԱԿԹ առաւօտները

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Ո Ռ

ՄԱԿԵՂՈՆԻԱՅԻՆ

Բարիքի յիշորօքէն շարաթաթեր-
թը Մայիս երկուրի թիւովը կը հրա-
տարակէ նկարապրութիւնը Մեծ Մի-
թինկին, ոչ տեղի ունեցաւ Միլանի
մէջ և որու մասին զրամ էինք նա-
խընթաց թիւով:

Ահա՛ թարգմանութիւնը.

Բողբի միթիկը, որ մեր բաղբին
մէջ տեղի ունեցաւ, մեծաշուք ու հո-
յակապ ցոյցերէն մին եղաւ, որուն
նմանը տեսած չէր Միլան: Բնգար-
ձակ թատրոն մը, բազմութեամբ լեփ
լեցան, և ինչ բազմութիւն, ծերա-
կոյտի անդամներ, երեսփոխաններ,
ատուար թիւ մը թաղապետական
խորհրդակցաններու, սուսցիչներու և
զրազէտներու, բանօրներու անանուն
ամբօխին խառնուած: Այնուառիայլ
տիկիները՝ զլուխնին բաց ժողովուրդի
կիներուն քովը նստած: Զորբեր ու
բազմաններ, երեսասարգներ, որոնք

սրամաութեան ազազակներ կ'արձա-
կէին Սուլթանին մալեկրօն ու վալ-
րձնի հրոսներուն զործած խժգժանը-
ներուն դէմ, վաղեմի զինուորներուն,
Խաալիան անկախ ազգ մ'ընող մեծ
պատերազմներէն՝ ծիր ու ծանրազլուխ
վերապրողներուն քովը նստած: Գե-
ղեցիկ էր անոնել երիտասարդները
որոնք ուժգին ու կզկնուած ծափերով
կ'արտայայտէին իրենց համակրու-
թիւնները Հայաստանին ու Մակե-
դոնիային դժբաղդ ժողովուրդներուն
համար: Ասիկայ սիրտը կը տաքցնէր
ու բարիք կը բերէր: Բայց տեսա-
լանը մեր կարիպաշտեաններուն և մեր
րիճոյիներուն, ծանր դիւրով մը հա-
մախմբուած իրենց զրօշակին աակ,
աւելի զբաւիչ տեսարան մըն էր:
Այս կիները, լսելով ատենարան-
ները, կը յիշէին արդէն անցած հե-
ռացած այն օրը, որ Խաալիան կը
հարտահարուէր, ինք ալ, բռնակա-
լութենէն, այն բռնակալութենէն ու-
րուն դէմ՝ կռուած էին զէն ի ձեռին:
Համերաշխութեան իրենց ցոյցերը

չէին ալմկատ, բայց արցունքներու շողալը տեոայ շատերու աչքերուն մէջ, համր վկայ ներքին խորունկ ցաւի մը, խառնուրդ յիշատակի ու յոյսի:

Պիտի չը կրնայի լաւագոյն նկարել հոյակապութիւնը սոյն հաւաքոյթին որուն իրենց անշահախնդիր աջակցութիւնը բերած էին բոլոր կուսակցութիւնները, բայց միայն յիշելով Պ. Ժորժ Լօրանի արտասանած ճառին վերջաբանը: Պեղծիքացի արմատական համակրելի երկտասարդը, որ մեր լեզուն կը խօսի դիւրութեամբ մը, որուն վրայ շատ մ'իտալացիներ պիտի նախանձէին, ըսաւ թէ ինք ներկայ զանուած էր խել մը ցոյցերու, ի նպաստ հայաստանին ու Մակեդոնիային: Մասնակցած էր նաև Պրիւսէլի միթինկին ու Բարիզ գումարուածին, այս տարի փետր. 13ին, Շաթօ ա'Օի մէջ: Միլանի ցոյցը շատ ու շատ գերիվերոյ եղաւ Պրիւսէլինէն, ըստ Պ. Լօրանի, ու վար չէր մնար բարիզեան մեծ հաւաքոյթէն:

Իրօք պէտք չ'է մոռնալ թէ Միլան քաղքին ետև ունինք ամբողջ Խոտալիան: Մեր միթինկին հասանութեան նամակներ ու հեռագիրներ կը հասնէին գրեթէ ամէն կողմէ: Նախ թագապետութիւնները, Պ. Մուսի, թագապետութեան ծերակուտականն ու Միլանի քաղաքապետը, զրկած է խիստ պերճախօս նամակ մը, զոր բոլոր լրագիրներն արտագրեցին: Իր օրինակին հետեւեցան Ռավէնի, Ռերպինոյի, Վալենձայի ու մեծ թիւով նուազ կարևոր քաղաքներու քաղաքապետութիւնները: Բրօ-Արմէնիէն Գօմիթէն, ասկէ զատ, ընդունած է հաւանութիւնները հարկաւ աւելի բնկերակցութեանց, որոնցմէ շատերը հազարաւոր անգամներ ունին Շատանանք յիշելով Հաւաքոյ-

ծողակաւեւերուն ազգային դաշնակցորթներ կուսակցութիւնը որ ինք մինակ տնի հազարէ աւելի բնկերութիւններ:

Արդէն ըսի թէ բոլոր լրագիրները մէկ մարդու պէս քալած էին միթինկին կազմակերպութեան շրջանին աւան:

Ամենաչնչին պատճառներով իրարու հետ կուսի բնուելու վարժուած մարդիկ հաշտեցնելու հրաշքը կատարուեցաւ մեծութեամբը գառին ու բարի կամքովը Պ. Մօնէթայի: Իտալիոյ մէջ խաղաղութեան ու իրաւարարութեան առաջնակին, այնքան քաղցր սրբան տնխանջ, պարզ հոգի և ուղիղ սիրտ, հոս ամենքէն սիրուած ու հիացուած: Մամուլին օրինակին հետեւեցան մեր քաղաքական աշխարհի ամենահայա կապ անձնաւորութիւնները: Այլիլ 26ի ցոյցին հաւանութիւնին զրկող ծերակուտականներուն մէջէն պէտք է յիշատակել միւս ամենքէն առաջ, Պ. կրաճիատօ Ասպօլի, մեծանուն բանասէրը, որ իր մեծ տարիքին մէջ կը պահէ դեռ իր երիտասարդութեան կըրտիլը. Պ. Վիլարի, հաշակատր պատմագէտը, հանրային կրթութեան նախկին նախարարը, յետոյ, Պ. տէ Անճէլի, Բօնգի, Բիլա, Բօսի և Մասարանի, հանրաձայնօթ գրապետը որ Բարիզ բերաւ Իտալիոյ ողջոյնը, Վիլլիօր Իւլոյի յուզարկատրութեանց առնն:

Երեսփոխաններուն հաւանութիւններն ա'լ աւելի բազմաթիւ են: Յիշատակենք Պ. Մարգօրա, փոխ-նախագահը Խորհրդարանին, Պ. Ռավա նախկին պետական խորհրդականը Պ. Պ. Մարինիա, Չիբօթի, Պարճիլաի, են: Կարճ կարելու համար այս նրկայն ցանկը անսուններու, սրտք պիտի կրնային առաւակայնել ընթերցողները, բաւականա՞նք նշանակելով

լիտւոյ Հասանութիւնը բոլոր երէտի-
խաններուն Միլանի, Հոսի, վինն-
աիկի և արիշ շատ մը կարեւոր բա-
ղարներու:

Ռրեմի իսա նպատաւոր, կամ նոյնիսկ
հնարաւոր ամենալաւ հովանաւորութեանց
սակ բացուած է Միլանի միթինը: Ասիկայ
լաւ տե՛սնուեցաւ ընդունելութենէն որ եզաւ
Մօնէթա, Բինարտի, Միչէի, վերջիկի և
Դուրպի, բոլոր իտալացի բանախօսներուն.
Պ. Լօրանի, Լօրիս Մկրթօֆ Հայուն, Ռա-
սէֆ Մակեդոնացիին և վերջապէս Պ. Բիւս-
Քիլեարի որ առարկան եղաւ խանգալաւ
կեցցեներու, քանի բանի անգամներ կրկնու-
ած ազգաբնակչութիւնը. «Ապրի Ֆրանսան»
Բրօ Արմէնիակի արի անօրէնն ունեցաւ բո-
լոր յաջողութիւնը որուն արձանի էր:

Հասարակութիւնը լարուած ուշադրու-
թեամբ մը հետեւեցաւ հայկական հարցի
վրայ իր ճառին, ա՛յնքան պայծառ, ա՛յնքան
ճշգրիտ, որ նոյնիսկ անկողիները, Ֆրան-
սերէնի իրենց կեսկատար հմտութեամբը,
կրցին գնահատել իր պերճախօսութիւնը
խիստ կորովի՝ իր ժառօկալութեանը մէջ:

Բան մը պիտի չ՛ըսեմ Պ. Լօրանի մասին,
զոր իտալացի հասարակութիւնը կը ճանչ-
նար արդէն, ոչ ալ այդ պտտման օրուան
միս բանախօսներուն նկատմամբ: Ամենքը
խօսեցան հոյ չաղտօրդի ազէսներուն և
Մակեդոնիոյ շարչարանքներուն վրայ իրբև
սրտի մարդեր, որոնք նուիրուած են աշխի-
զատի մը: Առաջուրէ մէջերնին բաժնած
ըլլալով աշխատանքը, ա՛յնքան հրատապ
հարցերն ո՛չ մէկը, որոնք ամեն բող էր
սպանան վրդովել Արեւիքի մէջ խաղաղու-
թիւնը, մէկի չը թողուեցաւ: Եւ նոյնպէս,
ամենահակառակորդ կո սակցութեանց ներ-
կայացուցիչներն ո՛չ մէկը բաւ մը փախ-
ցուց ընդունի որ անպատշաճ ըլլար կամ գո-
նէ աւելորդ: Միլան, ինչպէս և Բարիզ,
շատ հոգ տարուեցաւ խորշուաւ այն կծու
լեշուններէն, որոնք ա՛յնքան ամուլ են ւր-
քան խահմուտեան իրատները, որոնք իսա-
շատ անպատշաճ կը արտին մեզի իշի մը

օրկաններէ, որոնց մասին պիտի չը կրնա-
յինք ըսել թէ Արեւուտքի տէրութեանց
թէ աւելի Սուլթանին շահերուն կը ծառա-
յին: Վերջապէս Միլան, ինչպէս և Բարիզ,
կրիք հաղար բաղարացիները, որոնք ներկայ
եղան մեր հաւաքոյթին, քուէարկեցին օրա-
կարգ մը, որով կառավարութիւնը կը հրա-
ւիրուի յիշել 1878ին Պերլինի մէջ ստանձ-
նած պարտաւորութիւնները:

Երբոր Ժողովին նախագահը կարգաց օ-
րակարգը վասն Հայաստանի ու վասն Մա-
կեդոնիոյ զօմիթէին կողմէն ներկայացուած
օրակարգը, արդէն ժամը վեցը անցած էր:
Հասարակութիւնը սրահը բնած էր կէս օրէն
ետըր ժամը մէկին, ճառերը սկսած էին եր-
կուց ու կէսին: Առանկ բան երբէք տես-
նուած չ՛լը հոս: Պ. Մոնէթա, նախագահը,
միթինիէն օր մ՛տառ լի փափագ կը յայտնէր
որ ճառերը կարճ ըլլային, վախնալով որ ի-
տալական ժողովուրդը պիտի չկրնար երբէք
չորս ժամ շարունակ մտիկ ընել ճառեր,
ինչպէս որ եզաւ Բարիզ Ծաթօ ա՛Սի մի-
թինիէն:

ՃԻՒՈՋԷԲԲԷ ԲԻՆՍԱՐՏԻ

ԱԶԳԱՅԻՆ

ԲԻՐՍՄԻՏԻ Թատրոնին մէջ ամսոյս
17ի կերակի զէշերը տեղի պիտի ու-
նենայ «Նեյմի ԶԸ» բարոյալից թատ-
րերգութեան ներկայացումը, որ պիտի
վերջանայ զեղեցիկ ու խիստ ծիծա-
ղաշարժ կատակերգութեամբ մը:

Միջնարարներուն հայնուտղածուաց
խումբը, Մաքսրօլին առաջնորդու-
թեամբը, պիտի լսեցնէ գեղեցկազոյն
կատրները:

Թատրատէր հասարակութեան
կողմէն արդէն քանիցս ծափահարուած
Պ. Պ. Շաւարշէ և Շիշմանեանէ վատ
տոյն ներկայացման պիտի մասնակցին
գերասանուհի Տիկին Պերճիկ և Պ. Սի-
մեօֆ, Նարիկեան և Հայկունի որոնք
վերջնապէս մտած են իւրմբին մէջ:
Հետեւաբար, հիմակուրէն երաշխա-
ւորուած կրնանք համարել այս զի-
շերուան ներկայացման յաջողութիւնը:

ԱՐՅՈՒՆՔՆԵՐ

ՄԻՑԻ (ՇԱՀԷՆ) ՅԻՇԱՍԱԿԻՆ

Մերուժաններու, Վառակներու, Պապերու պատմութիւնն է որ ցաւալի նայնութեամբ կը կրկնուի այսօր զարձեալ մեր ազգային արզէն ինքնին շա՛տ տխուր կեանքին մէջ:

Երբեմն մէկ զբօշակի տակ իրարու ահանջի այնքան խանդազատանքով, «տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբայր ենք մենք» մրմնջող զինակից ընկերներ ահա կը վաւաճանեն իրարու վատաբար. եղբայրը՝ վայրագօրէն իր եղբօր արեան մէջ կը թաթխէ իր ձեռքերը...:

Օ՛ ահաբի ճակատագիրը հայուն, որը զարեբու և ժամանակներու ընթացքը չէ փոխեր բնաւին:

* * *

Դեռ երէկ թաղեցինք Վառպուրականի ձագ-արծիւ Ոսկանը. ճշմարտութեան և արդարութեան յաղթանակին համար զիւցազնօրէն մեռնող այն սէզ և լիւն՝ տղան: Անոր կսկծալի յիշատակը վա՛ռ կը մխայ զեռ հոգիներուն մէջ ամէն անոնց՝ որով գործուրանքով կը զոյգզան ամեն այն թանկագին կեանքերուն վրայ՝ որոնք կոչուած են հայութեան յոյսն ու լոյսն ըլլալու:

Անոր զերեղմանը նոր փակուած՝ քու զերեզմանդ ահա՛ կը բացուի խորունկ ու պա՛ղ մեր զարհուրած նայնածքին առջև, անզուգական Միօ, և անփոխարինելի կորուստը՝ անզարմանելի ցաւերու կսկիծովը կը գալարէ, կը խարկէ բեզ սիրողներուն հոգիները:

* * *

Գրածան ձեռքեր պիղծ սուրով մը ծակծրկեցին այն սիրտը՝ որը միայն Մեծ ու ճշմարիտ բաներու համար կը բաբախէր... եղբայրասպան ձեռքեր մարեցին արեւ Միօին, որը այնքա՛ն սիրեց արեւ հայուն:

Այս պիտի ըլլար լրիկ անձնօրրութիւններուց ու անհուն զոհողութիւններուց վարձատրութիւնը: ս՛ղ Միօ...:

Ինչո՞ւ արդեօք ճշմարիտ մեծութիւնը զատապարտած ըլլայ յաղթուելու Ստալինեան ու կեղծի՛քի զեերէն:

Օ՛ դուն մահուանէ չկիր վախնար, մենք զիտենք այդ մահը զվաւորելու կ'երթայիր արդէն. ահաբի հոգեարքը մը տանջանքները չէին կրնար ս'չ իսկ հասուցանը մը փրցնել քու արի կուրծքդ, մենք զիտենք այդ բայց ինչքա՛ն զառնութեամբ լացիր ու հառաչեցիր արդեօք, ինչքա՛ն զառնօրէն տառագեցաւ վե՛հ հոգիդ, երբ տեսար զիթխարի վատութիւնը անոնց՝ որոնք առնարար բեզի կուրծք տալէ վախնալով՝ Յուզայի համբոյրովը մօտեցան բեզի ու կ'անալկը զարկին մութին մէջ... հազար անգամ չմտա՞ր արդեօք այն վայրկեանին մտածելով որ հայ կը կոչուէին ասանք...:

* * *

Ինչ անհուն արտօմութեամբ փակեցիր արդեօք աչքերդ, բարեկամ, երբ կուտ զաշտին վրայ, թշնամիին սուրովը մեռնելու տենջալի Փառքը երազած տեղդ՝ տեսար ընկերներուց սուրը վրայ բարձրացած...:

Երջանի՛կ ժիրայր, որ կըցաւ արհամարհանօք նայիլ գոնէ իր սպաննիչներուն վրայ. իսկ դուն այդ միթմարս թիւնն ալ չունեցար. վասնզի քու սպաննիչներդ հայտ... և մահուանդ յեղափոխական հայտ անունը կը կրկին աւա՛ղ...:

* * *

Գանի՛ քանի՛ անգամներ երբ աչքերուս առջև ցաւալիօրէն կը պատկերանար ժիրայրներ մեղմօրօր իրենց կախազանին վրայ. Մորտաներ, ամզայն՝ բանտերու մթին կամարներուն տակ, երբ միտքս՝ մուտրուն կերթար թափառիլ անցեալի սև գէպքերուն վերջույնին մէջ, քու մտածուիլը պայծառ ճառագայթի մը պէս կուգար փարատելու յուշերուս զիշերը. «Միօն ունի՛նք զեռ...», և այս անունը սիրելի էր մեզի այն օրէն՝ երբ Չօք Մարդուանի արեւ փրկեցիր. և ամէն մի հսկայ աղկաթէ, ամէն մի զաննի սրտ ստէ կու-

բը, բազմը էր մեզի այն յոյսը թէ՛ որիչ շատ ԶօքՄարգուաններու արեւը զուն կարող էիր փրկել զեռ ես:

Ո՛ւր է գերեզմանդ հիմա, ո՛վ Միօ, ո՛վ զիսէ ո՛ր թափեցին հերոսի արիւնդ, ո՛ւր նեակեցին թանկագին մարմինդ... քեզ պաշտող ընկերներդ քու զագաղղ զրկելու, քեզ քու վերջին բնակարանդ առաջնորդելու սիրփանքն ալ չունենան. և սակայն հայ ժողովորդը իր անկեղծ ու անձնուէր բարեկամին անմահ յիշատակին փառաւոր շիրմը կանդնեց արդէն իր սրտին խորքերը և իր թափած արիւնին ու արցունքէն ծլած ու սնած անթառամ ծաղիկներով ծածկեց զայն...:

Թո՛ղ հայուն ապագայ պատմութիւնը այնքան ահեղ ոճիրներու ու սև մասնութիւններու շարքին մէջ, պանծանօք յիշատակէ քու ու քեզիպէսներու անունը որանք իրենց հերոսի կեանքովը փառաւորեցին անունը հայուն:

Հանգի՛ստ ոսկորներուդ, Տարօնի՛ առիւծ:
ՄԱՌԻ

ԿՍՐԴԱԼ

Յաջորդ թիւին առաջնորդողը «Չեթ-Ռուինէն» վերնադրով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Կագեթ՝ սը Ֆրանսէօրթի ուղղեալ հեռագրի մը համաձայն, Մայիս 4ին գիշերը Սուլթանին յատուկ հրամանովը, Մեծ-Եպարքոսարանին բազաքական տօմարները Երլազ-Բեօզի փոխադրուեցան, գաղտագուցի, առանց Գո. ոը գիտնալու, անձանթ պատճառներով:

— Սեղանիկէ ամսոյս 4ին հեռագիր մը կ'իմացնէ թէ աւսարիական մարտանաները մեկնեցան և մէկ հատ միայն մնաց:

— Ֆերսիմուսի իշխանը կը կարծուի զիւանդիտական շրջանակներու մէջ թէ Բարիզ Տէլլաուէի հետ տեսակցութեան միջոցին, խնդրած ըլլայ Ֆրանսայի Արտ. գործ. նախարարէն զիժուժ մ'ընել ուստական կառավարութեան. որիչներ ալ կը կարծեն թէ իշխանը Չանքեր ըրած է ի նպատտ իրեն զարձընելու անհամաձայնութիւնը, որ գոյութիւն ունի եղեր հիմայ Բարիզի ու Բեթլըր-գուրիկի կառավարութեանց միջև:

— Սուրբաճը Ֆերսիմանա իշխանէն խնդրեց որ, Թուրքիոյ ու Պուլկարիոյ շահուն համար, աւելի բուն ու լուրջ միջոցներ ձեռք աննէ մակեղանական գօմթիւներուն զէմ:

Այս լուրը պաշտօնական հեռագրէ մը անուած է, բայց չը կարծուիր թէ Սուլթանին զիմումը կարեոր հետեւանք մ'ունենայ:

— Մօնթէնէկրօի փոքրիկ իշխանագետութեան վրայ ատենէ մ'ի վեր կը գորդուրան Ռուսիան ու Իտալիան: Առաջինը միշտ ռազմամթիւրը կը հասցնէ Սեւ լեռը, Իտալիոյ ճամբով: Իսկ Իտալիան այս փոքրիկ երկրին զինուորական պատրաստութիւններուն կ'օգնէ: Իտալիոյ զրամական օգնութեանց շնորհիւ հիմայ Սեւեռական վաշտ մը կազմուեցաւ Բօսիօրիձա, յար և նման այն վաշտին որ արդէն կազմուած է Չէթիսէ Ռուսիոյ օգնութեամբը:

— Շօտրաի մէջ մեծ յուզում կը տիրէ. Ալբանիացիք հետեւիլ կ'ուզեն իրենց Հիւս. Ալբանիոյ կրօնակիցներուն օրինակին ու ամենաբուն կորովով զիմազրելու բարենորոգումներուն գործադրութեանը:

Ճարտույի ու Իրէկի պէյերուն երկու գործիչները Շքօտրա հասած են Մահմետական երեւելիները միացնելու համար բարենորոգումներուն զիմազրելու շարժումին ու վերակազմելու նախկին ալբանիական Դաշնակցութիւնը:

Քրիստոնեաներն ու եւրոպացիները կը վախնան մնալ Շքօտրա: Յնձիւնին վտանգի տակ կը նկատեն:

— Կրէսէի Խորհրդարանը նիստը բացաւ ամսոյս 4ին ու բուէարկեց օրակարգը, որուն մէջ, կրէտացի ժողովուրդին անունովը, բազձանք կը յայտնէ որ կրեաէն կցօւի Յունաստանին: Խորհրդարանը խնդրեց հսկանաւոր պետութիւններէն որ այս անյիղի բազձանքին իրագործուի:

— Հայ նուագածուաց խումբը պիտի նուագէ այսօր Իպրահիմլէյի Մեծ Գաղինօն: Կ'իմանանք թէ նոյն խումբը պիտի նուագէ նաև անդլիական նաւատորմին մեր նաւահանգիստն այցելութեան առթիւնովը սեղի ունենալիք հանգիսին:

—Դեպքակները Դրան ուշադրութիւնը դարձուցին Մանասթըրի կացութեանը վրայ, ուր Պուլկարներուն զէմ Թուրքերուն կատարելը կ'աւելնայ օրէ օր, արդէն բռանը հինգ Պուլկարներ սպաննուեցան իուժանէն: Ընդհանուր Զարդի զէմ ամեն խիստ միջոցներ ձեռք անելու համար՝ Դրան ազգարարութիւններ եղան:

—Սարաւժօճ վերադարձած չէ, ինչպէս Թուրքերը կը կարծէին. բռան օրէ ի վեր երբէք մասնակցած չէ ու է կոտի, Սևրզի մետ կը դանտի, մեծ թիւով հրոսախումբի մը զլուխը, անմատչելի ընտելու վրայ, ամենաբարձր դագաթ մը, զբաւած է, այնպէս որ իրեն հասնելու համար պէտք է նախ փճայնել ամբողջ խումբը: Սարաֆօֆ անցածները Սօֆիայի մակեդոնական զօմիթլին անդամի մը նամակ մը գրած էր, վերջին կոխներուն վրայ մանրամասնութիւններով լեցուն: Կը հաստատէ թէ իր ձեռքին մէջ առած է ապստամբութեան բոլոր թելերը, ինք կը վարէ խիստ զիւրաթեամբ ու պաշտօնաբարձր վայրկեանին պիտի կրնայ շարժման գնել տասնըհինգ հազար մարդ:

Առատ զէնք, մթերք ու պաշար, մեծաքանակ տխրամիթ ունի, իր մարդիկ կեանքերնին զոհելու պատրաստ են ու առեւժարք պիտի պատերազմին: Ընդվզած շատ մը գաւառներու մէջ, բոլոր ընտկիչները, կիներն ալ, վճռած են պատերազմիլ խամբերուն հետ միացած, կամ անոնց օգնելով:

—Ալքանկիացիք, եթէ հաստանք կ. Պուլէն տրուած անհատական աղբիւրի մը, սահմանազլիտուն մօտ տեղ մը, աստարիական զրօշակը պարզած են:

—Ֆերսիկանկս իշխանը Սօֆիա վերադարձած է, կացութիւնը հետզհետէ կը կնճատի:

—Հիշմի բաշան կը կարծէ թէ Ալքանկիոյ խաւթութիւնները շատ պիտի չը տան և կարելի պիտի ըլլայ պետերուն շատերը կ. Պուլիս զրկել, որ իրենց շատ մընձանիք ու փայլուն պաշտօններ կը սպասեն: Յայտարարած է նաև թէ՛ Պուլթանիս պատգամա որներուն համար վտանգ մը չը վախցուի:

ՊԱՏԿԵՐՈՋԱՐԴ՝ ՎԱԶԳԻՆ — ԵՐԳՈՐԱՆ

Մեծ զեղչով պիտի ծախուի վեց հարիւր մեծադիր երեսներէ բաղկացած այն ընդարձակ Երգարանը, իր մէջ կը պարունակէ բոլոր հին ու նոր երգերը և տասնի չափ նշանաւոր բանաստեղծներու պատկերներ և կենսագրականներ: Գինն է, ճամբու ծախքով միասին, առար մէկ չէնգ տասնըհինգ, Երոպայի համար հինգ ֆր. Պարսկաստանի համար չորս ֆր.

Տ. Փանոս Եւրիկեան. Աղեքսանդրիա.

Ռաթիպ փաշա փողոց:

Տ. Գ. Կազանչեան, Գաշիքէ. Ապտին:

Անպիկերէնի մասնաւոր գասեր ասնոյզը — որուն ծանուցումը ժամանակէ մ'ի վեր կը հրատարակուի Փիւնիկի մէջ — կը շարունակէ իր գասախօսութիւնները Պէտլիձի մթնաօլ. հիմայ անի բաւական թիւով աշակերտեր. կը խոստանայ շարաթը չորս անգամ գաս անոյզին սովորեցնել հինգ — վեց ամսուան մէջ զրել, կարգալ ու խօսիլ:

Մանրամասնութեանց ու պայմաններուն համար պիտի փնտրիկի խմբազուրթեան:

ԼԱՅ ԾՆՈՂՔՆԵՐՈՐ

ԱՐԵՒԷԼԵԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԿՐԹԱՏՈՐԻՆ

Լոզան, Զուիցերիա

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Արեւելեան կամ հայկական կրթատունը կ'ընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուսայ, ծնողքներու բազմաթիւն համեմատ, զիտական, զբաղան, առեւտրական կամ արհեստագիտական առողջ ու հիմնաւոր կրթութիւն մը, ներդաշնայօրէն միացած ազգային հիմնական գաստարակութեան մը հետ: Մեր հայ աշակերտներուն կ'աւանդենք, և այս՝ առանց ու եւ վճարումի՛ հայերէն լեզու, հայ. պատմութիւն, հայ. մատենագրութեան պատմութիւն, և:

Արեւելեան կրթատան տարեթոշակը, հակառակ իր ընծայած բազմաթիւ իրական առեւելութիւններուն, անմրցելի կերպով շափաւոր է:

Հայ ծնողներու համար մասնաւոր պայմաններ: Ընտանեկան կեանք:

Կրթատանո յայտագիրն ամեն ուղտի կը զրկուի:

ՏՆՕՐԷՆ Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Տարթ. ի Գիտութիւնս

Համալսարանական մասնաւոր Ռուսոյիչ

ՌԱՅՈՒՄԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՓԻՒՆԻԿ

ԱՄՆՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻՆ

Որ կ'սկսի այս տարուան Յուլիուէն հրա-
տարակուի Աւերսանգրիտ, նոյն ուղղու-
թեամբ և հարուստ պարունակութեամբ:

Ամենօրեայ Փիւնիկի խմբագիր-Տնօ-
րէնն է ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ, որուն պի-
տի աշխատակցին երկու օգնական-խմբա-
գիրներ ու մէկ աւելի թղթակիցներ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ամենօրեայ Փիւնիկը, ըլլալով ժող-
վրդային հրատարակութիւն մը, եւ նոյա-
տակ ունենալով քաջալիրել յատաշլիմաւեր
երեստարգրութեան շարժումները, առ այժմ
ասոնց համար մասնաւոր սինակ մը կը յառ-
կացնէ, ուր պիտի կրնան երեւիլ մանասնոց
նորահաս գրողներու յօդուածներ, հոգ չէ
թէ ասոնք կոչուով ու պաշտօնով խմբա-
գիրներ յորովայնէ ընտրեալ չ'ըլլան, եկամ
ուղղագրութեան վեճ ու մեղանշին: Խըմ-
բագրութիւնը, իրեն վերապահելով ո՛ր և է
գրութիւն կոկելու իրաւունքը, յօտարակամ
պիտի հրատարակէ յօդուածներ, թղթակի-
ցութիւններ, բաւական է որ հանրութեան
օգտաբեր, ժողովուրդը լուսաստորոզ գաղա-
փարներ բերեն անոնք:

Ամենօրեայ Փիւնիկը, ըլլալով ան-
կախ ու միանգամայն ազատական թերթ
մը, պիտի ջանայ մնալ միեւնոյն բարձրու-
թեանը վրայ, շարունակելով անաշտօրէն
քննադատել հանրային գործերն ու խայ-
տառակել զեղծումները, առանց խնայելու
այս կամ այն կուտակցութեան, անգ. լշտա-
նութեան, ևն.:

ԾՐԱԳԻՐ

- 1.— Կը պարունակէ ամեն օրուան
հեռագիրները, քաղաքական, ազգային, տե-
կան, առեւտրական, ևն. ևն առատ, ու
թարմ լուրեր:
- 2.— Անպակաս կ'ունենայ առաջնոր-
դոց յօդուած մը, ազգային թէ քաղաքա-
կան, գրական թէ գիտական նիւթի վրայ:
- 3 ԹԵՐԹՈՆԸ պիտի յատկացօի բա-
նասիրականին, որուն մէջ պիտի երեւին:
- Ա.— Ձեռքունականք. ամբողջ, այն է
իւր ճարտար ստրուսն պատմութեան մեծ
անցքերը, ցեղախումբերուն հետ լեռնցիներ:

րուն ընդհարումները, հերոսական արշաւանք-
ները, պատերազմները, ևն, ևն, ամբողջը
վեպի ձեւով:

Բ. Ձեռքունի սովորութիւնները, բարքերը,
զատարարքաւոր, աւանդութիւնները, լեռ-
նական կեանքը, ևն:

Գ. Հայկ. Հարցին վրայ սկիզբէն մին-
չեւ մեր օրերը լոյս տեսած թեր ու գէժ
հրատարակութեանց— բնականաբար զիւս-
նագէտներու, ընկերաբաններու, ճամբորդ-
ներու հեղինակութիւններ— նաեւ այս վեր-
ջին քառորդ տարու շրջանին, Եւրոպայի
զանազան կեդրոնները սարքուած հաւաքոյթ-
ներու մէջ լուսած բանախօսութեանց թարգ-
մանութիւնները, Կլասսիցիստի ճառերէն ըս-
կըսեալ մինչեւ Տիգրան Երկաթիւնները:

Դ. ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱՅԻ Կենսագրութիւ-
նը, մեզիս որ աւարտի:

Եգիպտահայ մեծ մարզերուն կենսագրու-
թիւնը:

Ե. Գիտութեան աշխարհին մէջ երեւցած
ամեն նորութիւն, զիւս, բեւեռախոյզ ու
երկրախոյզ զիտուններուն ծանօթագրու-
թիւնները, ևն:

Ամենօրեայ Փիւնիկին Չորրորդ էջը
պիտի գրաւեն ծանուցումներ, յայտա-
բարութիւններ, հայ թէ օտար վաճառա,
տանց, արհեստաւարներու, շուքնաւային-
երկաթուղեաց ընկերութեանց ժամանակա-
ցոյց ու սակագին, պարզեւտոր վիճակա-
հանութեանց ցուցակը, սակարանին կլեկ-
ները, ևն. ևն:

ՊԱՅՄԱՆՔ

Բաժանորդագրութիւնը կը սկսի ամեն ամ-
սոյ սկիզբէն և կէսէն:

Չեղքէ կը ծախուի հատը հինգ միլլիէմի:

	ԵՌԱՄՄ • ՎԵՑԱՄՄ • ՏԱՐԵԿ •		
Եգիպտոս զրշ.	30	60	120
Աքտասահման ֆր.	10	20	40
Ամերիկա տօլար	2	4	8
Կովկաս ոտրլի	4	8	16

Փրանսերէնի, տաճկերէնի եւ օտ-
մարակալութեան հմուտ երթտասարդ
մը պատրաստ է պաշտօնավարել վա-
ճառատան մէջ: Արտասահման ալ
կերթայ գոհացուցիչ պայմաններով,
գիմել խմբագրատունը:

